# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

***Երևանի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի 27/3 հասցեում նախատեսվող արտադրական նշանակության շինության և արհեստանոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների***

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք ՀՕ-150-Ն, խմբ. 3.05.24թ.) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2025թ. նոյեմբերի 5-ին՝ ժամը 12:30-ին, Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի է ունեցել քաղաքացի Նարեկ Մարգարյանի կողմից փորձաքննության ներկայացված՝ Երևանի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի 27/3 հասցեում նախատեսվող արտադրական նշանակության շինության և արհեստանոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսում (2-րդ լսում): Հանդիպմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, նախաձեռնող կողմի, Արաբկիր համայնքի ղեկավարը և աշխատակիցները, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը, և այլն:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ **Հ. Ֆրունզիկյանը** ողջունեց ներկաներին, ներկայացավ և խնդրեց ներկաներին ներկայանալ:

**Հ. Ֆրունզիկյանը** ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև հայտնեց, որ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա». ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է փորձաքննության: Գնահատման հաշվետվությունը ուղղարկվել է տարբեր նախարարություններ և շրջակա միջավայրի մասնագիտական ստորաբաժանումներ որոնք իրենց առաջարկություններն ու դիտողություններն են ներկայացրել, փորձագետի կողմից փորձաքննվել է և ուղղարկվել է լրամշակման, որը լրամշակվել է նախաձեռնողի կողմից: Այնուհետև ներկայացրեց նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի վրա հիմնական բացասական ազդեցությունները կապված փոշու արտանետումների հետ, վառելիքի արտանետումները շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, առաջացող թափոնների, աղմուկի և թրթռման հետ և այլն:

Ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց նախաձեռնող կողմի ներկայացուցչին և խնդրեց մանրամասն ներկայացնի նախատեսվող գործունեությունը: **Ներկայացուցիչ Ա. Գալոյանը** ներկայացավ և ներկայացրեց բնակավայրում նախատեսվող աշխատանքները, ծավալները, ծանոթացրեց նախագծին և գործունեության իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, և դրանց նվազեցմանն միտված միջոցառումների շրջանակը:

**Հ. Ֆրունզիկյանը** հարց բարձրացրեց կանաչապատման նախագծի, տնկվող ծառատեսակների, կոյուղու համակարգի վերաբերյալ և խնդրեց մանրամասն ներկայացնել:

**Ա. Գալոյանը** ներկայացրեց՝ հավելեց որ տարածքի կողքով անցնում է կոյուղագիծը որին էլ միացվելու է, կանաչապատումն իրականացվելու է ըստ նախագծման թույլտվության:

**Հ. Ֆրունզիկյանը** հետաքրքրվեց նախատեսվող գործունեության տարածքի հողերի նպատակային նշանակության վերաբերյալ:

**Արաբկիր վարչական շրջանի ղեկավարը՝** հետաքրքրվեց նախատեսվող գործունեության տարածք մուտք գործելու ճանապարհների վերաբերյալ և հավելեց որ կոյուղին պետք է պոմպակայանով նախատեսել, քանի որ նախատեսվող շինության 1-ին հարկը ավելի ցածր է քան կոյուղագիծը, հավելեց նաև նախատեսել աշխատանքների ժամանակ նախատեսել վնասված ճանապարհների ամբողջական վերականգնում:

**Նեկայացուցիչը** պատասխանեց, ասելով որ նախատեսվելու է պոմպակայան, և հավելեց որ կվերականգնվեն գործունեության ընթացքում առաջացած վնասված հատվածները:

**Համայքի ներկայացուցչի** կողմից հարց բարձրացվեց նախատեսվող գործունեության ժամանակ արդյոք օգտագործվելու են թունավոր կամ նմանատիպ նյութեր, օրինակ սոսինձ և այլն, կամ հաստոցներ նախատեսվելու են թե ոչ:

**Նեկայացուցիչը** պատասխանեց, որ ոչ կահույքի արտադրամասը պատրաստի լիստերը բերվելու են և հավաքվելու, հաստոցներ չեն նախատեսվում:

Այլ հարցեր չհնչեցին **Հ. Ֆրունզիկյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

Հանրային լսումների պատասխանատու և վարող՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն «ՊՈԱԿ» ՝

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ.Ֆրունզիկյան

Նարեկ Մարգարյան /ներկայացուցիչ՝